

## ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԵՒ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ՄԵՐԱՄՏԱՑԻՈՑ**

Երկու նշանաւոր ձեռագրերը.

1907 թուի ամառուայ ընթացքում հետախուզելով բազմաթիւ մատենադարաններ հայերէն ձեռագրերի ուսումնասիրութեան նպատակաւ հանդիպեցի բժշկական երկու նշանաւոր ձեռագրերի. մէկը սուրբ Յակովի եանց վանքում, երուսաղէմի մէջ, միւսը Լոնդրայի Բլիտանական թանգարանում։

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԶԵՐՄԱՆՅ ձեռագիրը գտնւում է երուսաղէմի հայոց վանքում (հ. 370) գրուած ԺԳ—ԺԴ գարում, բամբակէ հաստ թղթի վրայ որ շատ գործածելուց մաշուել է և ունի պակաս թերթեր, օրինակ էջ 1-21, 91-142, 151-154, 169-179 և լն, սակայն վերջին ստացողը լրացրեր է նօտր գրով։ Զեռագրիս գլխաւոր յիշատակարանը իւր թուականով և գրչի անունով կորած է, բայց բարեբախտաբար պահուած են այս երկու համառօտ յիշատակութիւնները։

ա.—«Տէր Յիսուս վայելել տացէ զբժշկաբանս մեծի և բարեպաշտ իշխանին Սեւաստաւին Հեթմոյ որդոյ Աւշի բարեպաշտի»։

բ.—«Յիսուս Քրիստոս որ բժիշկ ես հոգոց մարմնոց, բժշկեա զվէրս հոգւոյ և մարմնոյ ծառային քո Հեթմոյ Սեւաստոսի որդուոյ Աւշի»։

Օչնի որդի Հեթումը, Լամբրոնի իշխանը, մարաշաւատութեան պաշտօն ընդունեց իւր հօր մահուանից յետոյ, 1294-1307 թուին, հետեւապէս մեր ձեռագիրը գրուած է այդ ժամանակամիջոցում։

Զեռագրիս կարեւորութիւն տուողը ոչ թէ միայն ընագիրն է, որ ինչպէս նկատուեց, լի է թերի մասերով և

գժուար վերծանելի էջերով, այլ այն երկու մազաղաթեայ պահպանակները, որ պահուած են Զեռագրի կազմի հետ եւ որոնց վրայ նկարուած են ժամանակուայ բժշկների պատկերները՝ նկարները անկառկած շատ հին են և, իմ համազմամբ, ձեռագրին ժամանակակից, բայց դժբախտաբար խոնաւութիւնից և անխնամ պահպանութիւնից ներկերը դժբոյնացել են և կարելի չեղաւ լուսանկարչական յաջող նկար ստանալ:

Առաջի տախտակը ներկայացնում է չորս բժիշկների պատկեր, երկրորդ տախտակը պատկերացնում է պառկած հիւանդին, որին քննում են երկու բժիշկ, Բժշկներից երկուսը մօրուք ունին, մէկը ճերմակ, միւսը ուե, իսկ միւս երկուսը անմօրուք են. միակ տարբերութիւնը նրանց մէջ, որովհետեւ արտաքին բոլոր նշանները միտաեսակ են. նորա գլխներին ո՞նին չալմտ-փաթթոց, երկար ժապաւէնով պսակաձև կապուած մազերով, երկար զգեստ հագած, բոլորն էլ առաջահայեաց դիրքով. ձեռներին ինչ որ բան բռնած, որ նկարի վրայ որոշելը հեշտ չէ: Չորս դէմքերը տարբերում են միմեանցից, շատ հաւանական է նկարիչը փորձել է տալու բժիշկների պորտրետներ:

Երկրորդ նկարի վրայ ներկայացրած է պառկած հիւանդ, որին քննում են երկու բժիշկ, մէկը բռնել է հիւանդի երակը և ուշագրութեամբ քննում է. միւսը, նրա օգնականը, մի տուփ ձեռին մօտը կանգնած է և սպասում է առաջնի հրամանին: Հաւանական է որ ներկայացրած է արիւն առնելու տեսարանը:

Երուսաղէմում մանրամասն կանդ առնելու այդ նկարների վրայ ժամանակ չունէինք, տալով այս համառոտ տեղեկութիւնը, հրաւիրում ենք բժշկարաններով մասնակի պարտապող անձանց ուշագրութիւնը:

է հեղինակի կենդանութեամբ և գտնուել է նրա ձեռին, գրութեան թուականն է ԶԼԹ—1490-ից առաջ, գեղեցիկ մագաղաթ, քառածալ, 281 թերթ, խոնաւացած եւ անմաքուր, գիրն է միասիւն գեղեցիկ բոլորգիր, սակաւաթիւ ուկէնկար թոշնագրերով, զարդագրերով և երկու խորանով [թղ. 3<sup>ա</sup>, 13<sup>ա</sup>], երկու թերթ մագաթեայ պահպանակը երկաթագիր Աւետարանի հատուած է։ Բնագերը լրիւ է և, քանի որ Ամիրդովլաթի առաջի աշխատութեան և սրա մէջ մօտ 10-12 տարի է անցել, հաւանական է որ հեղինակը ինքը ձեռագրիս մէջ կատարած մինի որոշ փափոխութիւն, մի հանդամանք, որ մենք սուռագել չէինք կարաղ ժամանակ և ձեռի տակ յարմարութիւն չունենալով։

Ձեռագրիս կրկին նախաբանի մէջ ինքը հեղինակը տալիս է իւր աշխատութեան յարակայ պայմանները. որոնք բաւականաշափ տարբեր են այն յառաջաբաններից, որ սավորական են նրա բազմաթիւ ձեռագրիր օրինակներում, ուստի անշահ չենք համարում ամբողջութեամբ այստեղ արտատպելու։ Բացի այդ՝ գրքի վերջում իրար յաջորդում են չորս յիշատակարան, գրուած նրա կենդանութեամբ և նրա մահուանից փոքր անց, որոնք ապացուցանում են թէ իրաւամբ սա հեղինակի ձեռին եղած օրինակն է, թէեւ գրել տուողը ուրիշ անձնաւորութիւն էր։ Առաջի յիշատակարանը անվերծանելի է դարձած խոնաւութեան ենթարկուելով. գրա մէջ գրել տուողը վկայում է, որ ինքը տեսել է «ի մայրագաղաք» Բուրսա զբազմահանճար իմաստուն Ամիրդովլաթնա, երկրորդ և երրորդ յիշատակարաններով Ամիրդովլաթը ինքրում է յիշել իրեն և իւրայնոց, միւս կողմից ձեռագրի ծաղկողը՝ Մարտիրոս արեղան, գրում է. «ոսկով և կաղմով զարդարեցի զսա», և խնդրում է յիշել—«զպարոն Ամիրտովլաթն բժիշկն որ արդար ընչիւք զարդարել ետ զսա թվին ԶԼԹ»։ Ի վերջոյ երրորդ յիշատակարանում ասուած է որ Ամիրդովլաթ բժիշկը մեռել է ԶԼԹ թվին գեկտեմբերի Ը-ին, հինգշաբթի օր։ Եղակացութիւնն այս է. Ձեռագրիրս գրել է տուել

Ամիրդովլաթի ժամանակակից սմն, նրանից ստացել է ինքը հեղինակը, զարդարել տուել ուկով եւ արծաթով եւ լիշտակ թողել իւրայնոց, որ ձեռագրի մէջ մտցրել են նաեւ նրա մահուան տարեթիւը:

### ՑԻՇԱՑԱԿԱՐԱՆՔ ԱՄԻՐԴՈՎԼԱԹԻ

Ա. Թղ. 2<sup>ր</sup>. «Յիշատակարան գրքոյու Փառք . . ոկիզբն եղե գրման սրբոյ մատենիս որ անուանակոչի հեքիմարան ի թուականին Փրկչին և մերոյս գրեալ է առաջիկայ գրոջառ Առաջ ինչ բանքս ծանիք սիրելիք իմ. նախապէս ունի գիրքս այս առ յինքն հանդերձ և ազգի լեզուաւ բառս որ գրեալ իսկ է ներտեղւոջաւ Արդ սիրով ընկալիք և խնամարկութեամբ վայելեցէք զսայ զառողջարար ամենալիր մատեանս, և ծաղկալից բուրաստանս. որոյ պիտանաւորութիւնն և աւգտակարութիւնն մարդկայնոյ սեռից խօթացեալ անձանց յայտ իսկ է իմաստնոց այնքան է օրքան է յորդահոս աղքիւր առագնող և առատաբուզի վտակ զովացուցանող ծարաւուտ երկիր: Դտանի ի սմազանազան և լիակատար խորիս մեզեր. ազգի ազգի գեղօրայք և քաղցրահամ պէսպէս մէճուներ, որ քաղցրացուցանէ զքիմս զբերանս զգայարանս և ի ներքս բոլորից. հեզաբար ճաշակօղ հիւանդաց և սիրով ընդունողաց և սմազանի ընաւ միանդամայն զանազան բոյսք և անուշահոս ծաղկունք. շահաւետք պտուզք և միրդ զարմանալի. յազագո պիտոյից այսինքն խօթացելոց և տկարացելոց մարդկանց. ուրեմն պահէ զհոգի և զմարմին և զամենայն անդամս նոցին անարատ և առողջապէս:

Զի սա է ազնուագոյն խրախնարան, որով ուրախ առնէ զամենայն զգայարանս բանական կենդանեաց. առաւել հիւանդացեալ նիհար մարմնոց. անձանձրոյթ անձանց և է լիակատար և ամէնունակ բուրաստան հոգւոց և մարմնոց առողջութիւն և կենդանութիւն. յորմէ բուրին հոտք համայնից ծաղկանց ըստ մարմնառից հիւանդութեանց. Ուրեմն յոյժ պիտոյ են սպա իմաստուն և ճար-

տար բժշկաց. կարի հետաքրքիր լինողաց ի միտո. ուշի-մարար ըղձիւ ի կիր արկողաց. որով առ հիւանդս և ցաւագնեալս ի պէսպէս վիրաւորեալս մարմնականաց զօրե-ղապէս խնամատար լիցի. ևս պարտ է գիտել և խմանալ զանուանս և ներգործութիւնս բուսոց և տնկոց. ծաղ-կանց և պտղոց և այլ զանազան գեղօրէից. որ այնու կատարեալ գոլով ձեռնամուխ լիցի առ ի պիտոյից խընդ-րողաց. Ուրեմն ով սիրելիք, որք զմայլիք այսպիսեաւ ամե-նալի գանձարանաւոր որք կան ի սմա զետեղեալք. յիշես-ջիք առ Տէր յարժանաւոր յազօթս ձեր զամենանուաստ ծառայքս ձերում ազնուականութեան. զնախնի բժիշկը մեր Աերաստացի խօճայ Պարխօւտարն և որդի նորա ձէ-ռահ Ասարին. և որդի նորա բժիշկ Պետրոսն. ևս յիշեսջիք զԳրիգորն և Ասարազան. և թոռունք նոցա սարկաւոգ բժիշկ Միքայէլս. և եղբայր նորին խօճայ Գէորքն. և որդի նորա տիրացու Մանուկն. որք և յիշեալ լիջիք».

Բ. Թ. 3,<sup>ր</sup> «Լինիս գուշզի գունարայ բանիս պետ. գըրոցս է անունն անգետի անպետ Շնորհիւ Տեառն և ողորմութեամբն Արարչին և անմահին Աստուծոյ որ պար-գեող է ամենայն բարեաց և բաշխող է ամենայն շնոր-հաց . . . Աւրհնենք զարարիչն Աստուած. թէ կամ զբանըս կատարէս Գրենք զդեղերուն անուաննքն. ըսկըսայ ի յայր-ուրենէս Աւարտի սա հինգ լեզուաւ. զհայոց թուականն Զինէ (կարմիր): Ի ժամանակս թագաւորութեանն Խմայե-լացւոց ազգին սարակինոսաց ի յազգէն հագարու. ի նուազել թագաւորութեան յունաց ի մայրաքաղաքն կ. Պաւլիս որ անխազը և անսասան կենան այն քրիստո-նեայքն որ անդ են բնակեալ. ի թագաւորութեան սուլտան Մուհամմատ խանին. և ի հայրապետութեանն Տեառն Սար-գսի աթոռոյ Մրբոյ Էջմիածնի, և յեպիսկոպոսութեան Տէր Նիկոլայոսի, մայրաքաղաքին կ. Պաւլի և թուակ. հայոց վերսոյգրեալ Զինէ կարմիր գրին առ ստն սրբոյն Նիկո-ղայոս Աքանչելագործ և արագահաս հայրապետին. թարք-մանեցաւ այս գիրքս մէկ մէկ գեղերուն զաւրութիւնն ի բազում գրենաց յայլազգաց ձեռամբ մեղաւոր անպի-

տան և անիմաստ բժշկին Ամիրով վլաթին Ամասիացւոյ.. Եւ զայս գիրքս շինեցաք և ստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով. զի որք կարդան հեղտութեամբ յիմանան. և անգէտն ոչ աւգտի ի սմանէ. և անուանեցաք զայս գրոցս անուն անգիտաց անպէտ և պարտական եմք գիտնականացն և ծառայ ամենայն փիլիսոփայիցն»:

գ. Թղ. 280ր. «Փառք.. Հայոց թվկ.. ի մայրաքաղաքս Բուրսա (?) և տեսաք զբազմահանճար իմաստուն—Ամիրտովլաթն որ բազում աշխատութեամբ.. զայս գիրքս Ե. լեզուաւ գեղեցկայար»:

դ. Թղ. 281<sup>ա</sup> «Փառք քեզ Տէր..

որ տուիր ինձ ժամանակ մինչեւ ի սմա.

Ե. տարի տիւ և գիշեր աշխատեցայ.

ի բազում աւրինակաց աւարտի սա.

գրեցի կատարեցի բան զինչ որ կայ.

ի բառից բժշկութեան զինչ որ գըտա.

աւարտեմզսա հինգ լեզուով զինչ որ ուսաւ.

ի Հայոց ի Հոռմոց և յԱրապկա.

ի Պարսից և ի Թուրքաց քիչ Լաթինա.

և ի Հայոցն եմ արարել զսկիզբն դորայ.

ի վերայ այբուբենին զինչ գեղ որ կա.

և զիէն այլ յիշեց վերջին սորա.

ես բժիշկ Ամիրտովլաթու հայրս Եղիայ,

որ ծնեալ եմ ի քաղաքն Ամասիայ.

ես հիմայ եմ բնակել ի Բիւզանդիա.

որ իսկի գորա նման քաղաք չիկայ.

որ աթոռնէ թուրք ազգին հիմակ որ կայ.

որ ասեն տաճիկ լեզուաւ Կոստանդինա.

գծողնին և շինողին ով որ կարդա,

ոզորմի Քրիստոս..

Ե. 281<sup>ա</sup> Տարբեր գրչով. «Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրտովլաթ բժիշկն թալքմանող գրոցս. ի թվին Զիսէ գեկ. Ը. աւրն հինկարթի»:

զ. 281<sup>ա</sup> Նօտրգրով. «Ով սուրբ ընթերցողք յիշեցեք ի մաքրափայլ յազօթս ձեր զՄարտիրոս արէղաս, որ ոս-

կով և կաղմով զարդարեցի զ(u)ա. ընդ նմին և դպարոն Ամիրդովլաթն բժիշկն որ արդար ընչիւք զարդարել ետ զսա թվ. Զլթ»:

Պօլսում բժշկապետ Թուգոմեանը, հայ բժշկարան-ների արդիւնաւոր աշխատասիրով ինձնից լսելով այդերկու ձեռագրերի մասին խնդրեց հարկաւոր տեղեկութիւնը հազորդել։ Կատարելով նրա ցանկութիւնը, կանխեցի ի լոյս ածելու այս յիշատակարան-ները յուշագրութիւն բանասէրների։

#### Մերօյ Վարդապետ

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԵՐՆ ԵՒ ՀՈՒԱՏՈԼԻՔՆԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ \*)

Իմ հաւաքած միւս հաւատալիքները և անոտիապաշտութիւնները կարելի է երեք կարգի բաժանել, այսպէս՝ բժշկական, կհնացաղական և կրօնական։ Բժշկական հաւատալիքներից ամենաշատը վերաբերում էն Դող էրոցքին։ Օրինակ,

1. Ծաղկազարդին օրնած ուսուի ճիւղը եթէ տնկեն ու կպչի ծառ գառնայ, էրոցքը կը կտրի։ Հարկաւոր է հիւանդի շորի ծլանքներից մի կտոր կապել այդ ծառի ճիւղերին։

2. Եթէ հիւանդը կամուրջի տակով անցնի երեք անգամ էրոցքը կը կտրուի,

3. Հիւանդի ծոցը դնում են մի կտոր բամբակի։ Երբ պատարագ է լինում գիւղում՝ բամբակը տալիս են պատարագիչ քահանային, նա պատարագի ժամանակ այդ բամբակից թել է ոլորում, որը կապում են հիւանդի թել և հիւանդը առողջանում է։

4. Հիւանդի երկարութեամբ թել են չափում և դնում մի նոր մեռած մարգու ծոցը։ Հաւատում են, որ այդ միջոցը կտրական է, հիւանդը կամ կը մեռնի, կամ կառողջանայ։

5. Հիւանդի երեսը կամ ձեռները լուանում են սպանուածի կամ խեղգուածի գերեզմանի վրայ և ինչ ամանով որ ջուր են լցրել։ Կոտրում են խփելով նոյն գերեզմանաքարին։

6. Փողոցի լայնութեամբ և մի երկու արշին բարձրութեամբ թել են կապում գիշերը։ Ի հարկէ առաջին անցկացողը անզիտակցաբար կտրում է թելը սորանով և կտրում է դող—էրոցքը։

\*) Տես Արարատ № 4, 3—6